Արձանագրություն N 2

ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/76 ծածկագրով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով էլեկտրոնային աճուրդ գնման գործընթացով լաբորատոր սարքավորումների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

18.04.2024թ.

ժ. 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ա. Մկրտչյան

Անդամներ՝ Ա. Հակոբյան, Լ. Ալոյան

Քարտուղար՝ Մ. Ավագյան

Էլեկտրոնային աճուրդի եղանակով գնման ընթացակարգի ընթացքում ստացված հարցումների վերաբերյալ

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մկրտչյան

Պատասխանել էլեկտրոնային աճուրդի եղանակով գնման ընթացակարգի չափաբաժինների վերաբերյալ ստացված հարցումներին:

Հարցադրում N 1

Հարգելի՝ գործընկեր, 4-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում գրանուլյատորի համար նշված է "Հզորությունը ոչ ավել քան 0,3 կՎ": Նախ ցանկանում ենք նշել, որ կՎ-ն հզորության չափման միավոր չէ: Միևնույն ժամանակ, եթե նույնիսկ վրիպակ է տեղի ունեցել և նշվել է կՎ, կՎտ - ի փոխարեն, նշված բնութագրերի ապահովման համար 0,3 կՎտը բավարար չէ: Խնդրում ենք ևս մեկ անգամ ստուգել գրանուլյատորի պահանջվող հզորությունը: Խնդրում ենք նշել գրանուլյատորի արտադրողականությունը (կգ/ժամ, կամ կգ/դոպե): Նաև խնդրում ենք պարզաբանել, թե ի՞նչ է նշանակում "արտադրողի որակի սերտիֆիկատ" Որակի սերտիֆիկատը լինում է արտադրանքի համար: Արտադրողինը որակի կատարվարման համակարգի ներդրման սերտիֆիկատ է: Ո՞րն է պահանջվում:

Պարզաբանում N 1

Հարգելի մասնակից, ի պատասխան Ձեր հարցման տեղեկացնում ենք, որ հզորության դեպքում տեղի է ունեցել վրիպակ պետք է լինի 0,3կՎտ: Պահանջվող հզորության բավարար լինելու կամ չլինելու մասով՝ խնդրում ենք հետևել տեխնիկական բնութագրում նշված հզորությանը, գրանուլյատորի արտադրողականությունը առավելագույնը պետք է լինի 25կգ/ժամ, և վերջին կետի մասով պարզաբանում ենք· «արտադրողի որակի սերտիֆիկատ» ասելով նկատի ենք ունեցել «արտադրողի որակի ներդրման սերտիֆիկատ»:

Հարցադրում N 2

Հարգելի գործընկեր, խնդրում ենք տալ պարզաբանում հետևյալ հարցերին՝ 1) Միկրոցենտրիֆուգ ասելով ինչ ի նկատի ունեք, որ ցենտրիֆուգը լինի փոքր չափերով, թե ցենտրիֆուգը կարողանա ցենտրիֆուգել միկրոփորձանոթներ փոքր չափերի 2) տեխնիկական բնութագրում նշված է միջակայքը - առնվազն 9°C-ից +40°C, արդյոք այստեղ կա վրիպակ և պետք է նշված լիներ - (մինուս) -9°C-ից +40°C:

Պարզաբանում N 2

Հարգելի մասնակից, ի պատասխան Ձեր հարցման տեղեկացնում ենք, որ հայտում հստակ գրված է՝ 1. 24 x 1.5/2 mL, այսինքն ցենտրիֆուգը կարողանա ցենտրիֆուգել փոքր չափերի միկրոփորձանոթներ 2. Temperature range -9°C to +40°C - 9°C-ը կարող է լինել -5°C-ից սկսած

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Ա. Մկրտչյան

Ա. Հակոբյան

Լ. Ալոյան

Մ. Ավագյան